ընդառաջել է հոգևորական դասն։ Մոսկուայի մետրոպոլիտը ճառ է խօսել, Պետերբուրգի մետրոպոլիտըն ս. խաչը մատուցել է ի համբոյր, իսկ Կիևինը է սրսկել օրհնած ջրով։ Տաճարում ըսկսուել է ապա թագադրութեան հանդէսը, որին մասնակցել են բոլոր ռուս բարձր հոգևորականութիւնն և օրթոդոքս պատգամաւոր եկեղեցականները։ Ժամը տասից 4 վայրկեան անցած Կայսրը հաճել է թագը դնել Իւր գլխին, իսկ երեք վայրկենից յետոյ փոքր թագով պսակել Կայսրուհուն։ Ժամը 10 և 40 վայրկենին սկսուել է Կայսերական տիտղոսների ընթերցանութիւնն, որին ձայնակցել են դուրսը թնդանօթների որոտներն։ Ապա մերձեցել են կայսերական ընտանիքի անդամներն և օտար ներկայացուցիչներն ի շնորհաւորութիւն։ Ժամը 10-ից 55 րոպէ անցած Կայսրը սկսել է ծնկաչոք կարդալ որոշուած աղօթքը, ապա Պետերբուրգի մետրոպոլիտը կարդացել է կայսերական մաղթանքը, որին ամէնքը ծնկաչոք ունկնդրել են։ Այս աղօթքից յետոյ տեղի է ունեցել օծումն և հաղորդութիւնը, որից յետոյ Կայսերական Զոյգը Կարմիր դռնից ողջունել է ժողովրդին, որ պատասխանել է որոտաձայն «ուռայով»։

— Թագադրութեան առթիւ առատաձիր վարձատրութիւններ են ստացել բոլոր բարձր պաշտօնեաները՝ ինչպէս միշտ։ այս անգամ ևս չէ մոռացուել ժողովուրդը։ Կայսերական հրովարտակը անհամար պատժապարտներին պատիժները ներել և թեթևացրել է։ բացի դրանից ներուել է և ժողովրդական հարկի պարտքերից մի մեծ գումար, մերձաւորապէս 107,000,000 ռուբլի։

— Ռուսիոյ բոլոր քաղաքներում և գիւղերում մայիսի 14—16 մեծահանդէս տօներ են կատարուել։ ամենուրեք շքեղ ճրագալոյց է եղել երեք գիշեր շարունակ։ Շատ քաղաքներ և գիւղեր յաւերժացրել են թագադրութեան յիշատակը մընայուն հաստատութիւններով։

— Մոսկուայի մեծահանդէս ուրախութեան տօներին մի դժբախտութիւն տխրութեամբ է համակել ամէնքին։ Խոդինսկի դաշտի վերայ պատրաստուած ժողովրդական ճաշին մասնակցող ժողովրդի բազմութիւնը այնպէս է խուժել դէպի ճաշարանները, որ չէ նկատել ճանապարհի վրայ փոքրիկ խրամը, որի մէջ ոտնատակ են գնացել մօտ 2000 հոգի։ Կայսերական առատաձեռնութեամբ հոգ է տարուած թշուառների ընտանիքների համար։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵՆՂԾԻ.
ԳԵՐՄԱՆԻԱ.

— Բողոքական Գերմանիան ծանր օրեր է անցկացնում։ Վիլհելմ կայսրն իւր անհաստատ համակրութիւններով և հակակրութիւններով մեծ վիշտ է պատճառում բողոքական գերմանացիներին։ Իտալիա ճանապարհորդած ժամանակը Վիլհելմ կայսրն այնքան սիրալիր և անօրինակ մտերմական տեսակցութիւն է ունեցել պապի ներկայացուցիչներից մէկի հետ, որ բողոքական եկեղեցականութիւնը ներել կարող չէ։ Բայց աւելի ևս գրգռուել է այդ եկեղեցականութիւնը Վիլհելմ կայսրի մի հեռագրից, որի մէջ նա պաստորների քաղաքականութեան մէջ խառնուելն է դատապարտում։ Ահա այդ հեռագիրն.

«Շտէօկերն այն վախճանն ունեցաւ, որ ես տարիներ առաջ գուշակել էի։ Քաղաքական պաստորներն անտեղութիւններ են։ Ով քրիստոնեայ է, նա «ընկերական» (Social)» է, «քրիստոնեայ ընկերական» յիմար բան է եւ տանում է դէպի անծնահաճութիւն եւ անհամբերողութիւն, որոնք երկուսն էլ քրիստոնէութեան բոլորովին հակադիր են։ Պարոն պաստորները թող իրենց համայնքների հոգոց համար հոգան, մերձաւորների սէրը մշակեն, բայց քաղաքականութիւնը թողնեն, քանի որ այդ նրանց գործը չէ։ Վիլհելմ կայսր եւ թագաւոր։»

Այս օրերս Շտուտգարտում ժողով պէտք է գումարեն նոյն այդ «ընկերական պաստորները, քրիստոնեայ» սրոնք պատրաստուում են բողոքելու այդ խօսքերի դէմ։

25 մայիսի։

Ն. Քարամեան.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ՔՐԿՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ.

Սիրտս վշտահար, մոլորուած մտքով,
Նայում եմ առաջ, դիտում եմ հեռուն,
Եւ հարցընում եմ՝ վրնատած հոգով,
Թէ ո՛ւր պիտ հասնի մեր նաւն երերուն։

Ալեծուփ ծովին դարձած խաղալիկ
Եւ խաւարի մէջ կորցրած ուղին,
Առաջ ենք գնում՝ վաստակած, լռիկ,
Անգօր հպատակ մեր ճակատագրին։

Եւ տեսնում եմ ես, ամէնքս խոնարհ,
Մի յուսով միայն շենք ընկճուում ցայսօր.
Այդ մեր փրկութեան խաչն է լուսավառ,
Մեր յաւէտ անշէջ փարոս դարաւոր։

Սեւաթոյր երկնից մռայլ երեսին
Փայլել է նա միշտ իբր յուսոյ մի շող —
Սիւն կենդանութեան, Մայր Էջմիածին,
Տարագիր հօտի արթուն ժողովող։

Ե. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.